անհեռատես ու անտարբեր են եղել, որ մի-միայն բերդեր, դղեակներ, պալատներ, կամուրջներ եւ տաճարներ չինել են տուել իրենց անհատական վայելքի համար, երբեք չեն խրախուսել գրողին, ճարտասանին, որ երկրի ժողովրդի վիճակի նկարագիրն էլ արձանագրէ: Հելլադայից Յոյն դերասաններ բերել են տուել, նրանց ներկայացումով ոգեւորուել, բայց իրենց բանաստեղծներին եւ դուսաններին չեն մտածել վարձատրել: Փարպեցին Վահանի գործերն է արձանագրում, երբ նրանցից պահանջում են կազմել այդ պատմութիւնները. Եղիշէն Մամիկոնեանի խնդրանքով Վարդանանց Պատերազմի նկարագիրն է թողում. Սմբատ Բագրատունու խնդրանքով Մով. Խորենացին Հայոց Պատմութիւնը հաւաքում, գրի է անցնում, եւ Թ. Արծրունին Արծրունիների տան ներբողականն է գրում եւ բոլորը անչափ ժլատ: Այն գրական ոյժերը, որոնք կարող էին հարիւր հատոր Եղիշէներ գրել, կուտել երկրի անցեալի դանձարանը իրենց գրուածներում, ինչպէս հազար տարուան ընթացքում զարգացած Հայ լեզուն հաւաքեցին ու թողին Աստուածաշնչի մէջ. մի-մի փոքրիկ խղճուկ հատորներով վերջացնում են այն անսահման անցքերի պատմութիւնը, որոնցից կարելի էր մի քանի Աստուածաշնչեր կազմել:

Հարիւրաւոր մեծամեծ կալուածներ